

ԱՇՈՏ ՍՏԵՓԱՆՅԱՆ

ՈՐԴԱՆ ԿԱՐՄԻՐ

Հայ մշակույթի առավել տարադրունակ բնագավառներից մեկի՝ կիրառական արվեստի համակարգում, իր առանձնակի տեղն է գրավում գորգագործությունը, որը դարեր ի վեր հանդիսացել է հայկական ժողովրդական արհեստագործության առավել առաջնային ուղղություններից մեկը:

Գորգահյուս իրերի թեմատիկայի բազմազանությունը, երկրաչափական, կենդանական ու բուսական նախշաձևերի ռճավորված զուգորդումներն՝ արտահայտված պայմանաճանաչային համակարգով, թելանյութի որակն ու բուսական նյութից հանձնված առաջնակարգ ներկանյութերով մշակումները (որդան կարմիր տորոն, գխտոր, սոխի կեղև, կաղին, ինդիգո, լաջվարդ և այլն), ստեղծել են հայկական գորգերի նրբագեղությունն ու անկրկնելի կոմպոզիցիոն կառուցվածքը: Գեղարվեստական ու հարդարային բազմաթիվ առանձնահատկությունների շնորհիվ արհեստի բնագավառը ստեղծել է նաև լայն հնարավորություններ օժանդակ մասնագիտությունների զարգացման համար (թել մշակողներ, ներկանյութի ու ներկարարության վարպետներ, դագախագործներ և այլն): Այդ համակցումները, հայ արհեստավորների ստեղծագործածով վերածվել են հայկական մշակույթի պատմության մի մասնիկի և դարձել մի ամբողջ ժողովրդի պատմա-մշակութային ձեռքբերում: Գորգեր ու գորգահյուս իրեր, որոնք իրենց ղեկորատիվ ու գունային հնչեղությամբ հիմնավոր մուտք կգործեն անգամ եվրոպական գեղանկարչության ոլորտը, նպաստելով իսպանական, գերմանական, իտալական ու ցեղեղանդական գեղանկարչական մեծահամբավ կտավների կոմպոզիցիոն չափանիշների կազմավորմանը: Այդ են վկայում նրանց պատկերումների առատ օգտագործումը գեղնկարի հռչակավոր վարպետներ Ջոտտոյի (14-րդ դ.), Ե. Վան Էյկի (14-15-րդ դ.), Հ. Մեմլինգի, Մանաենեայի (15-րդ դ.), Պիտտորիկիայի, Յակոբո Բասանոյի (16-րդ դ.), Կարավաջոյի (16-17-րդ դ.), Ռուբենսի (16-17-րդ դ.), Վան Դեյկի (17-րդ դ.), Ռեմբրանդտի, Վերմեյերի, Տերբորխի (17-րդ դ.), Վելասկեսի (17-րդ դ.), Ռ. Հոգարսի (18-րդ դ.) և այլոց կտվեներում: Հայտնի էր և հայկական հայկական գորգի մի տարբերակ, որի պատկերումը գերմանացի մեծանուն գեղանկարիչ Հանս Հոլ-

բեյնի ստեղծագործություններում (16-րդ դ.) կստեղծի այդօրինակ գորգերի համար «Հուլբեյն» պայմանական անվանումը՝ մասնագիտական գրականության մեջ:

Միևնույն ժամանակ, հիմնասկզբով լինելով գուտ արևելյան երևույթ, հայկական գորգարվեստն իր առանձնահատկություններով եղել է նույն Արևելքի համար առավել ընկալելին, նախընտրվածն ու բարձրակարգ գնահատության արժանացածը, որի մասին են վկայում 10-13-րդ դդ. արաբ պատմագիրների որոշ հիշատակությունները: Այսպես օրինակ խոսելով արաբական խալիֆաթում տարածված արհեստների մասին Աս-Սա'ալիբին գրառում է. «...ինչ վերաբերվում է բրդյա գորգերին, ապա առաջին հերթին առանձնանում էին պարսկականը, հայկականն ու բուխարականը»: «...Փարսի նահանգում գործում էին իրոք «գեղարվեստական» բարձրակարգ չափանիշներով գորգեր, սակայն նույն ժամանակ առավել բարձր էին գնահատվում հատկապես հայկական գորգերը, այսինքն Փոքրասիականներ, որոնք Չմյուտնիայի մեր գորգորի հիմնօրինակներն էին» ճշտում է ալ-Իսթահրին²: Աբու ալ-Ֆարաջը հիշատակում է, որ «...խալիֆ ալ - Վալիդ 2-րդ-ի ապարանքի հատակն ու պատերը ծածկված էին հայկական գորգերով»³, իսկ Մաստուդին մասնավորեցնում է, որ «...առ- Ռաշիդ տիրակալի կինը զահանստում էր հայկական գորգերի վրա, իսկ մաժիշտ կանայք՝ հայկական բարձերի վրա»⁴: Արիբի մոտ կարդում ենք. «...Բադղադ քաղաքի ամենամեծահարուստ ոսկերչի մոտ (912 թ.) մեծարվում էին միայն հայկական և քաբարիստանյան (մագանդարանի շրջանի-Ա. Ս.) գորգերը»⁵: Ըստ Միսթավայի, նույնն է եղել նաև տիրակալ ալ-Մուքթադիի մոր զանձարանի հարսատությունների մեջ⁶, իսկ Էլիա Սմբեցին ճշտում է, որ մի ոմն ավատառու, որպես բարձրակարգ նվեր, խալիֆ ալ-Մուքթադիին է հանձնում 7 հայկական գորգ⁷: Նույն ալ-Իսթահրին նշում է, որ պարսկական գորգերից հատկապես գնահատվում էին նրանք, որոնք չէին զիջում հայկականներին⁸, իսկ Իբն Ռուսթան, խոսելով Սպահանի շրջանի պարսկական գորգերի մասին գրառում է, որ «...նրանք զովաբանվում էին, քանի որ առավել մոտ էին շքեղագույն հայկական գորգերին» և այլն⁹: Ընդհանրապես, արաբական խալիֆաթում հայկական գորգերը համեմատվում էին միմիայն թանկարժեք ոսկեհյուս գործվածքների հետ, որի մասին հիշատակվում է, որ «...արքայի կողմից օգտագործվող կամ նրան նվիրաբերվող գորգերը, կարպետները, բարձի երեսները և նման իրերը պետք է լինեին նույն որակի, ինչ որ հայկականները, որոնք առավել էին, քան արքայական արհեստանոցներում գործվող ոսկեհյուս գործվածքները»¹⁰: Հետաքրքրական է նաև, որ անգամ ժամանակի Եգիպտոսի մեծահամբավ առևտրական կենտրոններից մեկի՝ Կահիրեի գորգավաճառների պահեստներում առավել գովերգվում էին

հատկապես հայկական կարմրագույն գորգերը, իսկ եգիպտական Ասյուտ քաղաքում գործվող մորեգույն գորգերի քարճարժեքությունը բնորոշելու համար նրանք համեմատվել են միայն հայկական տեսակների հետ¹¹:

Այս առումով, տեղին ենք համարում մասնավորեցնելու հայկական «մորեգույն»՝ հատկապես կարմիր գորգերի առաջնայնության փաստը, որն վերաբերվում է հատկապես որդան կարմիր ներկատեսակի օգտագործմանը:

Պետք է նշել, կարմիր գույնի օգտագործումը այնքան տարածված էր հայկական գործվածքային արհեստագործության մեջ, որ նույնիսկ առօրյա գործածություն ունեին կարմիր ու նրա գունային երանգները բնութագրող բազմաթիվ բառիմաստներ, ինչպես օրինակ. խրունկ (կարմրի երանգը), բոսոր (արևագույն կարմիրը), ծիրանի, հալագի (կեռասի և վարդագույնի միջանկյալ երանգ) և այլն: Հայ ներկարարների մոտ կիրառվող բուսական թույլ կարմրագույն էր՝ «կապուշը», որից ստանում էին նարնջագույնը, «ասպուրը» (կակժիրակ)՝ հրագույն կարմիրը, հոնի ծառի ընձյուղներից պատրաստվում էր տաք կարմիր երանգ ունեցող ներկը և այլն և այլն:

Ներկարարությունը Հայաստանում տարածված հնագույն արհեստներից էր և յուրաքանչյուր բնակավայրերում, առանձնակի էր հանդես գալիս հատկապես ներկարարների թաղամասը կամ համքարական միավորը: Հետաքրքրական է այն փաստը, որ միջնադարում ձևավորված արհեստավորական այսօրինակ խմբավորումները մասնագիտացման նախահայր էին համարում Քրիստոսին, որն ըստ ավանդության, ինը տարեկան հասակում աշակերտել էր Իսրայել ներկարարին¹²:

Ներկարարությամբ զբաղվող հայ արհեստավորները, տարբեր ժամանակ ունեցել են արհեստը բնորոշող առանձնակի անվանումներ. նարտաներկ (ներկված թելը կոչվում էր «նարտ», որից և անվանումը), ներկիչ¹³, բոյախչի (կրով մշակող), սիլաջի (ներկարար) և այլն: Ներկարարի արհեստանոցն համապատասխանաբար անվանվում էր «ներկատուն», «ներկոց»¹⁴, «տուն ներկոց», «բոյա-խանա», «սիլաջ-խանա» և այլն. (նշենք նաև, որ Երևանում ևս, որոշ ժամանակ գոյություն ունեին «սիլաջ-խանա» (սիլաջի) անունը կրող թաղամաս, որտեղ 1915 թ. Մեծ Եղեռնից հետո բնակություն հաստատած գաղթականների զգալի մասը հիմնականում զբաղվում էր ներկարարությամբ):

Հայկական ներկատներում գոյություն ունեին թել ներկելու միասնական ձև, սակայն յուրաքանչյուր վաքպետ-ներկաբաբ աշխատում էր միայն իրեն հատուկ մասնագիտական զգացողությամբ, ունենալով ներկելու ավանդական որոշ գաղտնիքներ, ներկատեսակն ստեղծելու իր հմարները: Անգամ յուրաքանչյուր գավառում, քաղաքում, գյուղում և ըն-

տանիքում ներկում էին յուրովի, գույների անսահմանափակ տարբերակներով: Կարևորագույն չափանիշներից էր համարվում ներկի դիմացկունությունը, նրա վախճաղեցությունը լույսի, օդի, ջրի, վտշու հետ և այլն: Չափանիշներ, որին բավարարում էր հնագույն ժամանակներից Հայաստանում գոյություն ունեցող բուսական ծագում ունեցող ներկատեսակների բազմազանության մեջ առավել առաջնակարգ ներկանյութերից մեկը՝ «որդան կարմիրը»:

«Որդանը» հայտնի էր նաև «Հայկական պուրպուր», «Հայկական կոշենիլ», ինչպես և առավել տարածված «դրմիզ, դրմզի» անուններով (թուրքերեն «kermizi» – կարմիր, որը պարսկերենից փոխառնված «kerm» – որդ և «zamine» – հող բառակապակցման տարբերակն է: Հայկական որդի անվանման այսօրինակ բառաձևության կատեղծվի նաև ռուս. «червь» (չերվ) – «որդ» բառարմատի հիմքով «червоный» – կարմրագլած, կարմիր երանգ ունեցող արտահայտությունը, որը կիրառվում էր կարմիր երանգ ունեցող ոսկու համար: Նույն հայկական բառիմաստը կլինի նաև լատ. «vermis» – որդ և նույն հիմքից «vermikulat» – կարմիրով ներկված հասկացության հիմքում¹⁵):

Այս ներկատեսակին նվիրված առաջին հիշատակումները թերևս հանդիպում են Աստվածաշնչի հայերեն թարգմանության մեջ, որտեղ կարդում ենք. «Հիմա եկեք ու վիճաբանենք, ասում է Տերը, եթե ձեր մեղքերը կրկնակի կարմիրի պես պիտի լինին, ձիւնի պես պիտի սպիտականան, եթե նորանք որդան կարմիրի պես լինին, ասրի պես սպիտակ պիտի դառնան»¹⁶ իսկ Բաբելոն քաղաքի նկարագրի մեջ կարդում ենք. «Ոսկու եւ արծաթի եւ պատուական ակունքների եւ մարգարիտի եւ բեհեզի եւ ծիրանիի եւ մետաքսի եւ որդան կարմիրի ապրանքը...»¹⁷, իսկ քաղաքի կործանման ժամանակ, տեղի վաճառականների փախսանքի խոսքերն են. «Վա՛յ, վա՛յ մեծ քաղաք, որ բեհեզ եւ ծիրանի եւ որդան կարմիր էիր հագած, եւ ոսկով եւ ազնիվ քարերով եւ մարգարիտով զարդարուած...»¹⁸: Աստվածաշնչային այս տողերում հետաքրքրական է նաև մի յուրօրինակ հանգամանք. հայերեն թարգմանող գրիչները, հունարեն բնագրի բառերի իմաստային թարգմանության ժամանակ հստակ տարբերակում են դնում «ծիրանի» և «որդան կարմիր» գունավորումների անվանումների միջև:

Բոսորականքագույն «որդան» ներկատեսակի հումքը իր ձևի մեջ եզակի հանդիսացող միջատն է, որի վերաբերյալ առաջին մասնակի հիշատակումը հանդիպում ենք 5-րդ դարից, պատմահայր Մովսես Խորենացու կողմից գրառված տողերում. «...որդն յարմատոյ սիգոյ առ 'ի զարդ կարմրութեան գունաց»¹⁹: Նույն դարում պատմիչ Ղազար Փարպեցին, իր «Հայոց պատմության» մեջ Արարատյան դաշտին կնվիրի ընդարձակ մի նկարագիր, որտեղ մասնավորապես կգրառի. «...զարմատս

եղեգնասեր բուսոցն ոչ ընդունայն սնուցանէ յինքեան ամենաբաղձ դաշտն Այրարատոյ, այլ և ի նմանէ ծնէալ որդունս, ի գալոյ կարմրատեսիլ գունոց, ընծայէ օգտասիրացն շահս և շքեղութիւնս:»²⁰ 7-րդ դարում, Անանիա Շիրակացին իր «Աշխարհացոյցում» կնշի. «Եւ ունի Այրարատ լեռանս, գետս և դաշտս պիտանիս, և երես, և հաւս, և զամենայն պատրաստութիւն, և զծովակն գայլատու, և որդն սիգաբերեալ արմատոց առ ի գալոյ կարմրութեանս գունոյ»²¹, Այնօրինակ էր հետաքրքրությունը դեպի որդան կարմիրը, որ անգամ 12-րդ դ. Ներսէս Շնորհալին կստեղծի նրան նվիրված մի հանելուկ.

«Տեսի արուեստ զարմանազան,
Ձի նշտակով գերկիր բանան,
Հանեն արիւն անտի զինչ թան
Եւ զիր գրեն կայսերական
Եկ և տես այլ սոսկալի,
Ձի հատոցով երկիր բլրի,
Ելնէ կենդան ու ոչ կենդանի
Առնէ կարմիր զգոյն սպիտակի»²²:

խսկ Քրիստոսի խաչելության տեսարանի նկարագրում կգրառի հետևյալ տողերը.

«...Որ ըզգեցար ըզծիրանին,
Արկեր քղամիդ կարմիր յանձին.
Նախատանաց գոր կարծէին,
Ձինվորք Պնտոս Պիդատոսին.
Ըզքուրձ մեղաց մերկեա յինէն,
Ձյորդան կարմիր արեան գունին»²³:

Միջատը տարածված էր հատկապես Արարատյան դաշտավայրում, որտեղ ամռանը, հարսնյակ դառնալու ժամանակ, մինչ գետնի մեջ մտնելը ապրում էր մույն տեղում աճող եղեգի սեզի վրա: Օգտագործելով բնության կողմից կանխորոշված այդ կարճ ժամանակահատվածը (օգոստոս–հոկտեմբեր ամիսներ), տեղաբնակ կանայք նրանց հավաքում էին պղնձե հատուկ թասերի մեջ և լվացումից հետո չորացնում թմրի կրակով: Առավել բարդ վալն էր ստացված չորուկի մանրեցումը վաշի դարձնելու համար, քանի որ որդանյութը ուներ շատ բարձր յուղային բաղադրամաս (այդ մույն յուղային խտացումը ներկին հաղորդում էր անկրկնելի փայլ): Պատրաստված եվալը «կարմին» էր (այս տարբերակով շատ ավելի հայտնի գրքային ձևավորումներին և գեղանկարին նվիրված մասնագիտական գրականության մեջ): Ներկը ոչ միայն ամենալայն տարածումն ուներ Հայաստանում, այլև զգալի քանակով արտահանվում էր աշխարհի տարբեր երկրներ: Հայկական Որդան կարմրի մասին հետաքրքրական հիշատակություններից են հատկապես 10–14–

րդ դդ. Հայաստան այցելած մույն արաբ աշխարհագիրների գրառումները, որոնք մեզ կարող են հետաքրքրել որպես ականսանեսների դիտարկումներ: Այսպես օրինակ, ըստ Իբն ալ-Ֆաքիհի, հայերն ասում են, որ «...մենք ունենք կըրմիզ, որից ոչ մի տեղ չկա...»²⁴: Ալ-Մուքադասին հիշատակում է, որ Էջմիածնի մոտ հանդիպել է կանանց, որոնք զբաղված էին միջատ հավաքելով, որը կոչվում էր որդան կարմիր²⁵: Հայկական կարմիր ներկի մասին իր դիտարկումներում ալ-Մասուդին, դեռևս 943 թ. կատարում է մի գրառում. «Կարմիրը դա կնոջ, երեխայի և ուրախության գույն է: Կարմիր գույնն ամենալավն է աչքի համար, քանի որ այն լայնացնում է աչքի բիբը, այն դեպքում, երբ սևը այն նեղացնում է»²⁶ Հատկանշական է, որ միջնադարյան հայկական խոշոր քաղաքներ Դվինում և Արտաշատում այնքան շատ են եղել ներկանյութը օգտագործող ներկատները, որ արաբ աշխարհագիր-ճանապարհորդներ Բալագորին և Յաակուտ ալ Համավին Արտաշատն անվանել են «Կարբյաթ ալ-Քիրմիզ» (Կարմիր ավան) և «Կիրմիզի ավան»²⁷, իսկ 10-րդ դ. Դվին այցելած ալ-Իստահրին, տեղում գործվող բրդյա բազմազան գործվածքների հիշատակման ժամանակ կգրառի մաս, որ քաղաքում «մրանք (հայերը – Ա. Ս.) ունեն ներկ, որը կոչվում է «դրմեզ», որով ներկում են բուրդը և հայտնի է, որ դա որդ է, որը բոժոժի մման ինքն իր վրա է գործում»²⁸: Դվին քաղաքի վերաբերյալ մույնօրինակ հիշատակության ենք հանդիպում մաս Իբն Հաուքադի «Երկրագնդի մատյան» աշխատության մեջ, որտեղ հեղինակը առանձնացնելով այն հանգամանքը, որ գործվածքների զգալի մասը պատրաստվում են հատկապես այծի բրդից, շեշտադրում է, որ մրանք ներկվում են միայն «դրմիզի» (որդան կարմիր) ներկով, որը օգտագործվում է մաս «...բազմապիսի այլ գործվածքներ ներկելու համար»²⁹: Այսօրինակ հետաքրքրությունը դեպի որդան կարմիր ներկանյութը, հատկապես արաբների կողմից (հիշենք վերը նշված օրինակները), այդքան էլ պատահական չէր, եթե նկատի ունենանք մաս այն հանգամանքը, որ միջնադարում, համաշխարհային շուկայում շրջանառության մեջ էր գտնվում մաս լեռական կարմիր ներկը, որը մույնպես որդից ստեղծված ներկանյութեր էր, սակայն իր կայունությամբ ու գույնի մաքրագույն հնչեղությամբ (մի փոքր մանուշակագույնի երանգով), առաջնակարգ համարում աներ հատկապես հայկականը և, որ հիմնականում այն էր առաքվում արաբական խալիֆաթի համարյա բոլոր երկրամասերը³⁰:

Որդան կարմիր ներկատեսակի վերաբերյալ բազմաթիվ հիշատակություններ են մեզ ներկայանում մաս 15–18-րդ դդ. Հայաստանի տարածքով դեպի Իրան ուղևորվող եվրոպական դիվանագիտական խմբերի և անհատ ճանապարհորդների հուշագրություններից և օրագրային գրառումներից³¹ իսկ 19-րդ դ. առաջին կեսում Արարատ լեռը բարձրացող

ռուսական արշավախմբի ղեկավար, ռուսական զորքերի սպա Մարկովը, իր հաշվետվության մեջ կգրառի, որ 14. 000–15. 000 ռուսաչափի վրաս տեսել է որդան կարմիր միջատին³²:

Անվանի հայագետ–պատմաբան Ղևոնդ Ալիշանը, իր պատմագիտական ուսումնասիրություններում առանձնակի տեղ է հատկացնում որդան կարմիրն: Գիտնականը ոչ միայն ճշգրտում է որդանի գոյության տարածքային սահմանները (Արարատ լեռան ստորոտ, Խոր Վիրապ եկեղեցու շրջակայք, Արաքս գետի հյուսիսային հատված՝ Արագածոտն, Կարբի, Սարդարապատ և Կոտայք ավանները), այլև հատուկ կարևորություն է տալիս տարածքի բուսական ծածկություն հատկապես եղեգի սեզի առկայությանը, որն որդի գոյանալու և զարգանալու համար կենսական և ամենակարևոր նախապայմանն էր³³: Միջատի աբուն կամ ճանճը սևաթույր է, վարդագույն գծով երիզված մարմնիկով, հստակ ընդգծված աչքերով: Ունի երկարավուն ոտքեր, և պարզ, ֆափանցիկ թևեր: Էգն իր չափերով ավելի խոշոր է, կարմրավուն երանգով և ունի երեք գույզ վտքր թույլ զարգացած թաթիկներ: Ղ. Ալիշանը որդան կարմիրն համեմատում է մեղրաճանճի և շերամի որդի հետ: Նա շատ դիպուկ բնորոշում է այս միջատին, որը «...ի շահ և 'ի շքեղութիւն է», և «'ի զարդ պաճուճանաց առանհին, և 'ի վաճառ յօտար հրապարակս»: Գիտնականը գտնում է, որ իր որակով միայն լեռնական որդան կարմիրը կարող է որոշ չափով համեմատվել հայկականի հետ³⁴: 19-րդ սկզբին որդան կարմիրով, որպես գիտական երևույթ, սկսեց հետաքրքրվել Էջմիածնի վանքի միաբան, ծաղկարար, գիտական պրպատուն մտքի տեր Սահակ ծաղկարարը (1780–1858. Սահակ Տեր–Գրիգորյան):

Սահակը ծնունդով Երևանցի էր, մահտեսի Տեր–Գրիգորյանի ընտանիքից: Կրթությունը ստացել էր Էջմիածնում և հասել եպիսկոպոսի աստիճանի: Բազմաշնորհ էր: Հետաքրքրվում էր տարբեր արհեստների առանձնահատկություններով, ուսումնասիրում էր բնության երևույթները, որոնց վերաբերյալ հրդիտարկումներն ու եզրահանգումները գրառել է մի քանի տետրերում³⁵: Նա գրառվում էր «զաջվարդ» ներկանյութի ուսումնասիրությամբ (ներկերի մասին որոշ գիտելիքներ ձեռք էր բերել Էջմիածին ժամանած պարսիկ նկարչից՝ 1810–1815 թթ), հետաքրքրվում էր պտտաշի կիրառության ու տարատեսակ բաղադրամասեր ունեցող սոսինձների պատրաստմամբ, ռսկեզօծման, արծաթապատման, մետաղամշակման և անգամ կաշենյութը վարադելու հարցերով և այլն և այլն³⁶: Երազում հիմնել թղթի արտադրություն՝ թղթի պատրաստման իր կողմից մշակված բաղադրատոմսի հիմքով:

Այդուհանդերձ, նրա ամենաուշագրավ հետազոտություններն ամռչվում են հատկապես որդան կարմիր տերկատեսակին, որի դրդապատճառը կհանդիսանա 1815 թ. Տիգրանակերտցի մի ծերունու հետ

հանդիպումը և վերջինիս կողմից առաջարկը՝ փնտրելու որդան կարմրից յուրահատուկ յուղ ստանալու աղիներ, որի վարձերը կատարվել են, սակայն ավարտին չի հասցվել այդ ձեռնարկումը: Սահակի մի քանի տարի տևած հետազոտությունները պսակվում են հաջողությամբ և նա կարողանում է զանել միջատը մշակելու իր տարբերակը, որն ապահովում էր մաքրագույն կարմիր ներկի ստացումը (քացախի մշակում, կրաջրի և ծծմբանյութի օգտագործում, կալաքարի ու գինու հավելումներով ևն): 1820-ական թթ., իր իսկ հավաքված երեք փութ միջատներից Սահակը կարողանում է պատրաստել ներկանյութի քանակ, որով ներկված գործվածքների գունային որակի վերաբերյալ նա ներկայացնում է նամակ-ուղերձներ Էջմիածնի հոգևոր խորհրդին, Երևանի նահանգապետ Վ. Բեկյուրովին և Կովկասի կառավարիչ բարոն Գ. Ռոզենին³⁸: Իր բացատրագրերից մեկում, որը վերնագրված էր «Օրինակ կազմելու զկարմիր որդան կամ մեռուցման նորին, թե որով կերպի մարթ է լինել», Սահակը մանրամասն նկարագրում է աշխատանքը և նշում, որ բազմաթիվ փորձերի շնորհիվ գտել է որդան կարմրից ներկ ստանալու 13 «կերպ»³⁹: Սահակ ծաղկարարի կողմից առաջարկված ներկատեսակի պատրաստումը դառնում է Պետերբուրգի գիտությունների ակադեմիայի ակադեմիկոս Իոսիֆ Բ. Համելի (1788-1865) և ֆինանսների նախարար Ե. Պանկրևի ուսումնասիրության և հատուկ զեկուցագրի առարկան⁴⁰: Միևնույն ժամանակ, ակադեմիկոս Ի. Համելի կողմից ներկայացվում է իսպաներեն ու գերմաներեն լեզուներով արված գրավոր եզրակացություն ու բացատրագիր՝ եվրոպական մասնագետներին ևս նյութին հաղորդակից դարձնելու նպատակով⁴¹:

1833 թ., Ի. Համելը, Ս. Պետերբուրգի գիտությունների ակադեմիա է ուղարկվում Սահակ ծաղկարարի կողմից ստացված որդան կարմիր ներկանյութը (գործի ակտիվ միջնորդներ ու հովանավորողներ էին հայոց կաթողիկոս Եփրեմ Ա Չորագեղցին և բարոն Վ. Ռոզենը): 1834 թ. մայիսի 4-ին Ի. Համելը ուսումնասիրելով ներկանյութի բաղադրամասերը, իր նկատառումները ներկայացնում է գիտությունների ակադեմիայի հանձնախմբին, որտեղ պարզաբանվում էին ներկանյութի քիմիական և ֆիզիկական առանձնահատկությունները, ինչպես և արդյունաբերության մեջ այն օգտագործելու լայն հեռանկարները: Իր զեկույցում գիտնականը տալիս է նաև իր կողմից կատարված ներկի անվանման խոր, գիտական բացատրությունը, որի համաձայն հայկական Որդան կարմրից են ծագում «որդ» և մի շարք այլ բառեր տարբեր լեզուներում, ինչպես նաև երախտագիտության խոսք էր հայտնում, որ իր կատարածը գնահատվել է բարձր ատյանների կողմից և ներկին տրվել է իր անունը՝ «Porphyrophova Hamel»⁴² (ցավոք, մոռացության էր տրվել հեղինակը՝ Սահակ ծաղկարարը):

Նույն 1833 թ. Պետերբուրգում բացված մանուֆակտուրային ցուցահանդեսի առաջնային ցուցանմուշներից էր նաև Ռդան կարմիրը, որի վերաբերյալ ժամանակի մի թղթակցության մեջ կարդում ենք, «Այստեղ (ցուցահանդեսում—Ա. Մ.) ամենահետաքրքիրը ոչ մեծ մի ապակե աման է ռուսական կոշենիով, որը ստանում են... հայկական գավառում: Ասում են, որ այն իր որակով չի զիջում արևմտյան հնդկաստանյանին: Էրիվանի մոտ շատ ծառեր են աճում, որոնց վրա զարգանում է այս կոշենիլը»⁴³: Երկու տարի անց, Ի. Համելի ամմիջական ղեկավարությամբ, Պետերբուրգի Ակադեմիային կից Տեխնոլոգիական ինստիտուտում պատրաստված կարմիր ներկն ու նրանով ներկված բուրդը ցուցադրվում են նաև 1835 թ. Մոսկվայում բացված Մանուֆակտուրայի Երկրորդ ցուցահանդեսում, որտեղ նյութն ու հայտնագործությունը արդեն ներկայացվում են որպես գործը ֆինանսավորող բարոն Գ. Ռոզենի սեփականություն⁴⁴: Հետաքրքրական է, որ այս ցուցահանդես այցելած Նիկոլայ Ա թագավորին նվիրաբերվում են Սահակ ծաղկարարի կողմից որդան կարմիրով ներկված մի քանի թաշկինակներ:

Չնայած այն հանգամանքին, որ որդան կարմիր ներկանյութը արդյունաբերության մեջ օգտագործելու առաջարկը չիրականացավ և մատնվեց մոռացության, այդուհանդերձ Սահակ ծաղկարարի կատարածը մասամբ գնահատվեց. 1834 թ մարտի 28-ին, բարոն Գ. Ռոզենը շնորհավորական նամակ է ուղղում Սահակ ծաղկարարին և նրան է ուղարկում Պետերբուրգից ստացված ադամանդակալու մատանին, իսկ 1839 թ., ռուսական կառավարությունը, բազմակողմանի ու նվիրյալ գործունեության համար Սահակ Տեր-Գրիգորյանին (Սահակ ծաղկարարին) նշանակում է ցմահ թոշակ (200ռ.)⁴⁵:

Հետաքրքրության է արժանի և այն փաստը, որ Սահակ ծաղկարարի աշխատանքին ծանոթ է եղել նաև հայ անվանի հասարակական-քաղաքական գործիչ, հրապարակախոս, գրող Միքայել Նալբանդյանը, որը 1863 թ. մայիսի 1-ին, Պետերբուրգից իր եղբորը՝ Դավաթսին գրած նամակում խնդրում է միջնորդել և Անանիա Սուրբանշահի ուշադրությունը հրավիրել «Coccinella» ընտանիքին պատկանող որդերի ուսումնասիրության վրա, որը «...գտնվում և աճում է Հայաստանում, Արաքսի հովտում»: Գնահատելով Սահակ եպիսկոպոսի գործունեությունը, Մ. Նալբանդյանը ցավով նշում է, որ նա իր հետ գերեզման տարավ դրանք աճեցնելու և հավաքելու գիտությունը, և անհրաժեշտ է գրուցել գործն իմացող մարդկանց հետ և «Արարատյան դաշտի հայ շինականների բարբառով մի բրոշյուր հրատարակել և տվորեցնել նրանց, թե ինչպես պետք է աճեցնել և ժողովել որդան կարմիրը, իսկ դա կարևոր բան է աղքատ շինականների համար»⁴⁶:

Որդան կարմիրին նվիրված Սահակ ծաղկարարի ուսումնասիրության վերջնական և բարձր գնահատանքը կատարվում է Ղ. Ալիշանի կողմից, որը ոչ միայն ուսումնասիրել է նրա օրագրերը (Սահակ ծաղկարարի եղբոր որդի, գրական և թատերական գործիչ Էմին Տեր-Գրիգորյանը օրագրերի ձեռագիրը ուղարկել էր Վենետիկ, մեծամուն գիտնականին), այլև որպես երախտիքի գնահատում, Արարատ աշխարհին նվիրված իր հիմնարար հետազոտության մեջ տեղադրում է նրա վիմագիր դիմանկարը⁴⁷:

20-րդ դ. 30-ական թվականներին հայկական Որդան կարմիրով կզբաղվեն Սոսկվայի Պետական համալսարանի կողմից Հայաստան գործողված արշավախմբի անդամները, բայց քանի որ նրանց համար պարզաբանված չէր «Որդանի» կենսաբանությունը, ուսումնասիրությունները կավարտվեն անարդյունք⁴⁸:

Ժամանակի ու պատմության մեջ կմնան հայկական գեղեցկագույն ներկատեսակի վերաբերյալ հիշատակումներն ու նրա կիրառությանը համբավ ձեռք բերած հայկական հյուսածո իրերի աշխարհառչակ օրինակները:

ASHOT STEPANYAN

VORDAN KARMIR (RED WORM)

The wicker art is one of the finest sphere of the Armenian applied art and with its decorative structure, distinctive peculiarities of ornament, use of thread and paint materials has created such originality of the Armenian weave, which brought to it world fame and became a finest part of the Armenian applied art history and the historical-cultural achievement of a whole people.

Used in weave the paint materials were often one of the most important criteria of things evaluation, and the paint art was one the oldest spread in Armenia. At the base of the art spreading there was also existed in Armenia paints diversity, which was well-known since oldest times having vegetable, animal and mineral genesis. In row the paint material VORDAN KARMIR (RED WORM) was often the object of the special interest and study of travelers, geographians, historians and specialists. It was delightful with its quality and paint peculiarities, having world fame was evaluated on equal to gold, and remained in history as a mysterious phenomena with the Armenian monopoly.

ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Шу' А. Мец. *Мусульманский Ренессанс*, М., 1973, с. 369:
2. Նույն տեղում:
3. Նույն տեղում:

4. Նույն տեղում:
5. Նույն տեղում:
6. Նույն տեղում:
7. Նույն տեղում:
8. Նույն տեղում:
9. Նույն տեղում:
10. A. von Kremer, *Kulturgeschichte des Orients unter den Chalifen*, Wien, 1875, p. 302:
11. A. Меу, Նշվ. աշխ., էջ 36:.
12. Թանգարան հայկական եին ու մոր դպրության: Մաս Բ. Անկանոն գիրք մոր կտակարանաց: Վենետիկ, 1898, էջ 92:
13. Յասմավուրք, *Փետրվարի Ը*, Կ. Պոլիս, 1730 թ.:
14. Նույն տեղում: Ներսես Շնորհալի Թուղթ Ընդհանրական, էջ 66:
15. Որդան կարմիրի մասին տես՝ Հ. Տաճատ Եարտըմեան, Որդան կարմիր «Գըրմըզ» կամ հայկական կարմիր ներկ. Նիթեր հայ գորգարուեստի պատմության: «Բազմավեպ», No 33, Վենետիկ, 1991:
16. Աստուածաշունչ, ԵՍԱՅԻԱՅԻ ՄԱՐԳԱՐԵՈՒԹԻՒՆԸ, ԳԼ. Ա, 18:
17. Աստուածաշունչ, ՀՈՎՀԱՆՆԵՍ ԱՌԱՋԵԱԼԻ ՅԱՅՏՆՈՒԹԻՒՆԸ, ԳԼ. ԺԸ, 12:
18. Աստուածաշունչ, ՀՈՎՀԱՆՆԵՍ ԱՌԱՋԵԱԼԻ ՅԱՅՏՆՈՒԹԻՒՆԸ, ԳԼ. ԺԸ, 16:
19. Մովսես Խորենացի Սրբոյ Հօրն Մերոյ Մովսեսի Խորենացոյ Մատենագրութիւնք, Վենետիկ, 1865, Վենետիկ, 1865, էջ 611:
20. Ա. Աբրահամյան, Անանիա Շիրակացու Մատենագրություն: Երևան, 1944, էջ 351;
21. Ղազար Փարպեցայ Պատմութիւն հայոց եւ թուրք առ Վահան Մամիկոնեան: Աշխատութեամբ Գ. Տէր-Մկրտչեան եւ Ստ. Մալխասեանց: Տիֆլիս, 1904, էջ 10:
22. Ներսես Շնորհալի Բանք Չափաւ, Երևան, Մատենադարան, ձեռ. • 9071:
23. Ներսես Շնորհալի ՏՆ. Ներսեսի Շնորհալոյ Հայոց կաթողիկոսի Բանք Չափաւ, Վենետիկ, ՌՄՀԹ [1830], էջ 121:
24. Н. А. Караулов, *Сведения арабских географов IX—X веков по Р. Хр. — о Кавказе, Армении и Азербайджане*. В кн.: Сборник материалов для описания местностей и племен Кавказа; вып. XXXI, Тифлис, 1902, с. 39.
25. Там же, вып. XXXVIII, Тифлис, 1908, с. 36.
26. Masoudi, *Les Prairies d'or*. Texte et traduction par C. Barbier de Meynard. T. IV, Paris, 1871, p. 102:
27. Արաբական աղբյուրները Հայաստանի և հարևան երկրների մասին: Կազմեց Հ. Թ. Նալբանդյանը: Երևան, 1965, էջ 129, 97; Արաբացի մատենագիրները Հայաստանի մասին: Հավաքեց և թարգմանեց Բ. Խալաթյանը: Վիեննա, 1919, էջ 26;
28. *Viae regnorum. Descriptio ditionis moslemicae auctore*. 1967. Abu Ishak al-Farisi al-Istakhri. Ed. M. J. de Goeje, Lugduni Batavorum, 1870 (BGA. I), p. 188.

29. Իրն Հատկապես, Երկրագնդի Մատյան, Բեյրութ, 1978, էջ 294. (առար.):
30. Я. Манандян, О торговле и городах Армении в связи с мировой торговли с древних времен (V в. до н. эры - XV в. нашей эры). Ер, 1954, с. 229-230.
31. Տես՝ Հ. Տաճատ Եարաբնան, Նշվ. աշխ., էջ 22-31:
32. «Բազմավեպ», 1890, էջ 276-277:
33. Ղ. Ալիշան, Այրարատ: Վեճեռիկ, 1895, էջ 284: Որդան կարմիր մեղկի մասին հարուստ տեղեկություններ է հաղորդում հայագետ Հ. Զյուրտյանը՝ նշելով անգամ նրա քիմիական կառուցվածքի չափանիշները՝ $C_{22}H_{20}O_{13}$. տես՝ Հ. Զյուրտյան, Որդան (կարմիր) կամ Kirmiz. «Բազմավեպ», 1932, No 2, էջ 62-68, No 4, էջ 156-163:
34. Ղ. Ալիշան, Նշվ. աշխ., էջ 284
35. Երևան, Մատենադարան, ձեռ. No 6247, Նույն տեղում, ձեռ. No 9029, Խառնակ Ծաղկարար, Խրատք ծաղկարարության: Երևան-Էջմիածին, 1815-1840; Նույն տեղում, ձեռ. No 6248. Գաղափար օրինակք մանրանկարող Սահակի ծաղկարարի: 1819-1837 թթ.: Սահակ Ծաղկարարի մասին տես նաև Ա. Փաշայան, XIX դարի քիմիան հայ բնագետների աշխատություններում: Երևան, 1990, էջ 54-59:
36. Տ. Ղազանյան, Սահակ Ծաղկարար. - «Բանբեր Մատենադարանի», Եր., 1956, No 3, էջ 131-139:
37. Երևան, Մատենադարան, ձեռ. No 6247, էջ 16:
38. Центральный Государственный Исторический Архив Грузии, ф. 2а, инв. хр. 2571 - "О размножении Армянской кошенили и о добывании из нее краски": Սահակ Տեր-Գրիգորյանի գրառումներից կազմված այս գործին կցված է տեքստային քարզմանությունը և Հովհաննես կաթողիկոսի կոմդակը ուղղված բարոն Գ. Ռոզենին: Փաստաթղթերի մեջ ներգրավված է նաև Մ. Վոսկոբոյնիկովի ընդարձակ ուսումնասիրությունը որդան կարմրի վերաբերյալ:
39. Գործից երեք փաստաթուղթ (այդ թվում նաև Սահակ ծաղկարարի մանակը հասցեագրված բարոն Գ. Ռոզենին), հրատարակել է Լ. Մելիքսեթ-Բեկը. տես՝ Լ. Մելիքսեթ-Բեկ, Հայաստանում կարմիր որդան մեղկի արտադրության պատմությունից: ՀՄՄՀ ԳԱ «Տեղեկագիր», Երևան, 1946, NoNo 2-3, էջ 17-26:
40. Центральный Государственный Исторический Архив РФ (ЦГИА РФ), ф. 18, оп. 2, д. 827, 1833-1836 гг. Գործը վերնագրված է "Дело по рапорту коллежского советника Калиновского об искусственном разведении и использовании для окраски тканей обнаруженной в Армении". (Վավերագրի վերաբերյալ առաջին հիշատակումները կատարում է արվեստարան Զ. Թառայանը. տես՝ Յ. Թարայан, Набойка в Армении, Ереван, 1978, с. 31-32): Վավերագրում հետաքրքրական է նաև որդան կարմիրն մոռացության մատնելու յուրօրինակ փաստարկը. «Դժբախտ քաղաքական իրադարձությունները, որոնց ենթարկվել է Հայաստանը բազում դարերի ընթացքում, որդան կարմրի գործածությունից հեռանալու հիմնական պատճառներից մեկն է»: Վավերագրից պարզվում է նաև, որ որդան կարմիրով առաջին հետաքրքրվողներից է եղել նաև լեզվագետ,

- քննախոյզ-արևելագետ Ֆրիդրիխ Պարրոտը տես՝ Parrot Friedrich, Reise zum Ararat, T. I, Berlin, 1834, p. 106-107 և նույն զրքի երկրորդ հրատարակությունը. Leipzig, 1985, p. 80-82: Որդան կարմիր ներկին վերաբերվող Ֆ. Պարրոտի գրառման քարզմանությունը տես՝ Խ. Արովյան, Երկերի լիակատար ժողովածու, Հ. VII, Երևան, 1956, էջ 267-268:
41. Über cochenille am Ararat und über wzur zalcochenille im Allgemeinen von J. Hamel. – “Memoires de L'Academie imperiale des sciences de St. Petersburg, VI^{me} serie. Sciences Mathematiques, Physiques et Naturales” T. III, Leipzig, 1835, p. 9-65. Ուսումնասիրությանը կցված են մալ վիմագրական զծանկարներ եղեգնի ու որդի ձվերի, ինչպես մալ որդի պատկերագրություններով: Նույն աշխատանքում տեղավորված է մալ ակադեմիկոսներ Ի. Համելի և Ժ. Բրանտոտի կողմից 1833 թ. սեպտեմբերի 13-ին Ռուսաստանի գիտությունների ակադեմիայի նիստին ներկայացված համատեղ զեկուցման տեքստը որը վերաբերվում էր հայկական և մեքսիկական որդան կարմիր ներկերի համեմատությանը (նույն տեղում, էջ, 65-68): Ի. Համելի զեկուցման տեքստի համառոտագիրը հրատարակվել է մալ ռուսերեն. “Об Араратской кашенили. Извлечение из сочинения академика Гамеля, напечатанного в записках Императорской Академии Наук” – “Журнал министерства внутренних дел”, Ч. XVII, М., 1835, июль, с. 192-217, ինչպես մալ. “Об Араратской кашенили. Донесение Императорской Академии Наук от г-на академика Гамеля” – “Собрание актов, относящихся к обозрению истории армянского народа”. Ч. 2, Москва, 1838, с. 391-433.
 42. Автобиография И. Гамеля. Ленинград, Гос. публичная библиотека им. М. Е. Салтыкова-Щедрина, отдел рукописей, ф. 129, уд. хр. 1059, с. 5.
 43. [Н. Гр.] Наблюдения в отечестве. Выставка 1833 года. [Пись. –в Департ.] – “Северная пчела”, СПб., 1833, 23 мая, с. 447.
 44. Указатель произведений отечественной промышленности, находящихся на выставке 1835 года в Москве. М., 1835, с. 3. Отделение 1. Первообразные и полуобработанные материалы, No 382.
 45. Երևան, Մատենադարան, ձեռ. No 6247
 46. Միքայել Նալբանդյան, Երկերի լիակատար ժողովածու, Հ. 5, Երևան, 1984, էջ 271:
 47. Ղ. Ալիշան, Նշվ. աշխ., էջ 484:
 48. 1930-ական թթ կատարած հետազոտությունների մասին տես. А. С. Аветян, К вопросу о кошенили в Армении. – “Известия” Армянского филиала АН СССР, 1940, No 4-5, с. 231-237; Լ. Բեկ-Հովսեփյան, Արարատյան Որդան կարմիրը և նրա արդյունաբերական օգտագործման հնարավորությունները, Երևան, 1932: